ՈՐՈՇՈՒՄ

Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի և Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հասարակական գիտությունների Բաժանմունքների միացյալ գիտական սեսիայի

(Ընդունված է 1948 թ. մայիսի 29-ի պլենար նիստում)

Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի և Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հասարակական գիտությունների Բաժանմունքների միացյալ սեսիան հանդիսացավ լենինյան-ստալինյան քաղաքականության հաղթանակի և Անդրկովկասի Ռեսպուբլիկաների գիտության ու կուլտուրայի ծաղկման փայլուն ցուցադրումը։ Միայն սովետական կարգերում, Ստալինյան Կոնստիտուցիայի արևի տակ հնարավոր եղավ անցկացնել Վրաստանի և Հայաստանի պատմաբանների և ֆիլոլոգների միացյալ կոնֆերանս։

Սեսիան հնարավորություն տվեց միացյալ կերպով քննարկել վրացագիտության և հայագիտության մի շարք հանդուցային խնդիրներ և համագործակցություն հաստատել երկու Ակադեմիայի իսկական անդամների, թղթակից-անդամների և առաջավոր գիտական աշխատակիցների միջև։ Սեսիան հավատացած է, որ հետագայում համատեղ այս աշխատանքին կմիանա և Ադրբեջանի ՍՍՌ Գիտությունների Ակադեմիան և այսպիսով Անդրկովկասի երեք եղբայրական ռեսպուբլիկաների գիտական կենտրոնները կհամագործակցեն սերտ կոնտակտի մեջ։ Սեսիան իր համոզմունքն է արտահայտում այն մասին, որ մերձավոր տարիները կլինեն Անդրկովկասի ռեսպուբլիկաների հասարակական գիտությունների հետագա զարգացման տարիներ, գիտական կադրերի աճման և գիտա-հետազոտական աշխատանքների վերակառուցման տարիներ, թեմատիկայի էլ ավելի արդիականացման, մասնավորապես պատմության, գրականության, լեզվի և սովետական շրջանի էկոնոմիկայի ավելի խորը ուսումնասիրության ուղղությամբ։

Երեք ակադեմիաների հետագա փրգասավոր համագործակցությունը ապահովելու նպատակով սեսիան անհրաժեշտ է համարում.

1. 2—3 տարին մեկ անդամ անցկացնել Ադրբեջանական ՍՍՌ, Վրացական ՍՍՌ և Հայկական ՍՍՌ Ակադեմիաների հասարակական գիտությունների Բաժանմունքների միացյալ սեսիաներ.

2. Սեսիաների միջև ընկած ժամանակամիջոցում սիստեմատիկ կապ պահպանել երեք Ակադեմիաների հասարակական գիտությունների Բաժանմունքների միջև

ա) գիտա-հետազոտական պլանների փոխադարձ ծանոթացմամբ և այդ պլանների համաձայնեցմամբ.

բ) իսկական անդամների, թղթակից-անդամների և առաջավոր գիտական աշխատակիցների մասնակցությամբ մյուս Ակադեմիաների հերթական սեսիաներին.

գ) առանձին ինստիտուտների ներկայացուցիչների մասնակցությամբ մյուս Ակադեմիաների համապատասխան ինստիտուտների սեսիաներին.

դ) հրատարակությունների սիստեմատիկ փոխանակությամբ.

ե) երեք ռեսպուբլիկաներում հրատարակվող գիտա-հետազոտական աշխատանքների գրախոսումով.

զ) գիտական աշխատակիցների և ասպիրանտների մասնակցությամբ մյուս Ակադեմիաների կողմից տարվող հնագիտական պեղումներին։

3. Նպատակահարմար համարել հնագիտության, արվեստագիտության, ազգագրության, պատմության, լեզվի, էկոնոմիկայի, փիլիսոփայության և այլ դիսցիպլինների հարցերին նվիրված Անդրկովկասյան կոնֆերանսների և թեմատիկ խորհրդակցությունների սիստեմատիկ հրավիրումը։

4. Հաշվի առնելով գրավոր աղբյուրների հրատարակման ընդհանրական գոյություն ունեցող որոշ թերացումը, անհրաժեշտ համարել ուժեղացնել հին տեքստերի էպիգրաֆիկ նյութերի և արխիվային փաստաթղթերի գիտա-քննական հրատարակումը։

5. Արագացնել վրացիների համար հայ լեզվի և հայերի համար վրաց լեզվի դասագրքերի (բառարաններ և քերականության ձեռնարկներ) կազմումը։

6. Նպատակահարմար համարել բարձրագույն հիմնարկներում հատուկ կուրսեր կարդալու համար ուժերի փոխանակումը և երիտասարդ կադրերի պատրաստման գործում փոխադարձ օգնությունը։